ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Գյումրի «16» հոկտեմբեր 2026թ.

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղարի Ա.Աբրահամյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Բաժանորդ), մի կողմից, և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Շիրակի ԳԳՄ», որը գործում է համաձայն իրեն տրամադրած գործունեության թիվ 01-33/584 լիցենզիայի այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս տնօրեն Թ.Սուքիասյանի մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված N: 02108133943 գազի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 42-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սպառողին մատակարարել սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Սպառողը պարտավորում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն համաձայնագիրը գործում է 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայության մատուցման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Շիրակի ԳԳՄ»
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Ք.Գյումրի, Չայկովսկի 2
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	« Արդշինբանկ » ՓԲԸ
Հ/Հ 900211205027	Հ/Հ 2470095100899990
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 00046317
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ